Reproductive Health Initiative for Youth in the South Caucasus
RHIYC
EPF
This Programme is co-funded by the European Union
United Nations Population Fund
UNFPA



# ՃԱՆԱՉԵՔ ՁԵՐ ՍԵՌԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

ԼԻՆԵ՛ՆՔ ԻՐԱԶԵԿ, ԱՊՐԵ՛ՆՔ ԱՌՈՂՋ

IPPF International Planned Parenthood Federation
«ՀԱՆՈՒՆ ԸՆՏԱՆԻՔԻ ԵՎ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԱՍՈՑԻԱՑԻԱ
IPPF-ի ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՎԱԾ ԱՆԴԱՄ

## Որոնք են սեռական և վերարտադրողական իրավունքները

Ֆիզիկական անձեռնմխելիության իրավունքները բխում են մարդու ամենակենսական իրավունքների հիմնարար սկզբունքներից: Սեռականության և վերարտադրողականության առումով այդ իրավունքներն ընդգրկում են երկու հիմնական սկզբունքներ՝ սեռական և վերարտադրողական բուժօգնության իրավունք և սեռական ու վերարտադրողական հարցերի վերաբերյալ ինքնուրույն որոշումների կայացման իրավունք:

Սեռական և վերարտադրողական իրավունքների ճանաչման ու դրանց պաշտպանության հիմք են հանդիսանում մի շարք միջազգային համաձայնագրեր, որոնք ներառում են հիմնարար իրավունքների պաշտպանությունը, դրանք են կյանքի, առողջության, խտրականության և բռնության բոլոր ձևերից ազատ լինելու, հավասարության, անձի անձեռնմխելիության իրավունքները:

Բոլոր մարդիկ՝ անկախ ռասայից, մաշկի գույնից, ազգային պատկանելությունից, լեզվական տարբերություններից, հավատքից, քաղաքական կամ այլ համոզմունքներից, սոցիալական ծագումից, ամուսնական կարգավիճակից, տարիքից, սեռից, սեռական կողմնորոշումից, ֆիզիկական կամ մտավոր ունակություններից կամ այլ կարգավիճակներից, ունեն կենսական կարևորության իրավունքներ.

| | |
|---|---|
| 1. | Կյանքի իրավունք |
| 2. | Անհատի ազատության և անվտանգության իրավունք |
| 3. | Խտրականության բոլոր ձևերից ազատ լինելու և հավասարության իրավունք |
| 4. | Անձնականի գաղտնիության իրավունք |
| 5. | Համոզմունքի ազատության իրավունք |
| 6. | Տեղեկատվության և կրթության իրավունք |
| 7. | Ամուսնանալու, ընտանիք կազմելու և այն պլանավորելու ընտրության իրավունք |
| 8. | Երեխաներ ունենալ-չունենալու և երբ ունենալու որոշման իրավունք |
| 9. | Բուժօգնության և առողջության պահպանման իրավունք |
| 10. | Գիտական նվաճումներից օգտվելու իրավունք |
| 11. | Հավաքների ազատության և քաղաքական մասնակցության իրավունք |
| 12. | Բռնարարքներից և նվաստացումներից պաշտպանված լինելու իրավունք: |



## *1. Կյանքի իրավունք*

*Բոլոր մարդիկ ունեն կյանքի իրավունք: Հղիությունը և ծննդաբերությունը չպետք է վտանգեն որևէ մեկի կյանքը: Բոլոր կանայք ունեն անվտանգ մայրության իրավունք:*



## 2. Անհատի ազատության և անվտանգության իրավունք

Բոլոր մարդիկ ազատ են վնօրինելու իրենց սեռական և վերարտադրողական կյանքը՝ հաշվի առնելով այլոց իրավունքները: Յուրաքանչյուր ոք իրավունք ունի պաշտպանված լինել հարկադրական հղիությունից, աբորտից, թրաֆիքինգից, ամլացումից և սեռական օրգանները խեղող միջամտություններից:





## 3. Խտրականության բոլոր ձևերից ազատ լինելու և հավասարության իրավունք

Յուրաքանչյուր ոք լույս աշխարհ է գալիս որպես ազատ մարդ՝ հավասար արժանապատվությամբ ու իրավունքներով: Բոլոր մարդիկ, այդ թվում նաև երիտասարդները, իրավունք ունեն պաշտպանված լինելու խտրականության բոլոր ձևերից, ներառյալ նրանք, որ պայմանավորված են օրենքներով, կանոններով, սովորույթներով, հասարակական կամ մշակութային նորմերով, ինչպես նաև այնպիսի սովորույթներով ու գործընթացներով, որոնց հիմքում ընկած է սեռերից որևէ մեկի գերազանցության կամ պղամարդկանց ու կանանց կարծրատիպային դերերի գաղափարը:



## 4. Անձնականի գաղտնիության իրավունք

Բոլոր մարդիկ իրավունք ունեն զերծ մնալու անթույլատրելի և պատահական ներխուժումներից իրենց անձնական կյանքի և ընտանեկան հարցերի, ինչպես նաև անձնական նամակագրության մեջ: Պետք է պաշտպանվի սեռական և վերարտադրողական առողջության հարցերի շուրջ յուրաքանչյուր մարդու, այդ թվում նաև դեռահասի, մեկուսի պայմաններում բժշկական խորհրդատվություն ստանալու և անձնական տեղեկությունների գաղտնիության իրավունքը:





## 5. Համոզմունքի ազատության իրավունք

Բոլոր մարդիկ՝ անկախ համոզմունքից, խղճից, դավանանքից, ունեն իրենց սեռական և վերարտադրողական առողջության հետ կապված որոշումներ կայացնելու իրավունքը, որը, սակայն, կարող է անտեսվել մարդու կյանքին սպառնացող և շտապ բուժմիջամտություն պահանջող իրավիճակներում:



## 6. Տեղեկատվության և կրթության իրավունք

Բոլոր մարդիկ, այդ թվում նաև երիտասարդները, ունեն պտղաբերության կարգավորման մեթոդների առավելությունների, հնարավոր վտանգների և արդյունավետության մասին ընդգրկուն տեղեկատվություն ստանալու իրավունք, որպեսզի այդ հարցերի վերաբերյալ ցանկացած որոշում հիմնված լինի նրանց լիակատար, ազատ և գիտակցված համաձայնության վրա: Կրթության հիմնական իրավունքները ներառում են մարդու սեռականության, սեռական և վերարտադրողական առողջության ու իրավունքների վերաբերյալ տեղեկատվություն, ուսուցում և խորհրդատվություն ստանալու իրավունքները:





## 7. Ամուսնանալու, ընտանիք կազմելու և այն պլանավորելու ընտրության իրավունք

Բոլոր մարդիկ ունեն կամավոր ընտրությամբ ամուսնանալու, ընտանիք կազմելու և այն պլանավորելու իրավունք: Զույգերը պետք է պաշտպանված լինեն սեփական կամքին հակառակ ամուսնությունից, որը կայացվում է առանց իրենց լիակատար և գիտակցված համաձայնության:



## 8. Երեխաներ ունենալ - չունենալու և երբ ունենալու որոշման իրավունք

Բոլոր մարդիկ իրավունք ունեն ազատորեն և ողջամտորեն որոշելու իրենց երեխաների թիվը և նրանց ծնունդների միջև ընկած ժամանակահատվածը: Այդ իրավունքը ենթադրում է երեխաներ ունենալ-չունենալու և երբ ունենալու իրավունքը: Այն ներառում է վերարտադրողական առողջության այնպիսի ծառայությունների մատչելիություն, որոնք ընդգրկում են պտղաբերության կարգավորման ապահով, արդյունավետ և ընդունելի միջոցների հնարավորինս լայն շրջանակ:





## 9. Բուժօգնության և առողջության պահպանման իրավունք

Բոլոր մարդիկ, այդ թվում նաև դեռահասները, իրավունք ունեն օգտվելու առողջապահական առավել բարձրորակ ծառայություններից և պաշտպանված լինելու այնպիսի մեթոդների կիրառումից, որոնք վտանգ են ներկայացնում առողջության համար:



## *10. Գիտական նվաճումներից օգտվելու իրավունք*

*Բոլոր մարդիկ իրավունք ունեն օգտվելու մարդու վերարտադրողական առողջությունը կարգավորող առկա տեխնոլոգիաներից, ներառյալ պտղաբերության կարգավորման ու անպտղության բուժման ապահով և ընդունելի նորագույն մեթոդները:*





## *11. Հավաքների ազատության և քաղաքական մասնակցության իրավունք*

*Հավաքների ազատության և քաղաքական մասնակցության իրավունքը վերաբերում է նաև սեռական ու վերարտադրողական առողջության և իրավունքների պաշտպանությանը միտված կազմակերպություններ ստեղծելուն ու դրանց անդամակցելուն:*



## *12. Բռնարարքներից և նվաստացումներից պաշտպանված լինելու իրավունք*

> *Բոլոր պղամադիկ, կանայք ու երեխաներն ունեն բռնարարքներից, դաժան, անմարդկային նվաստացնող վերաբերմունքից ու անհիմն պապիժներից ազատ լինելու իրավունք, այդ թվում սեռական բռնություններից, շահագործումից և ոտնձգություններից:*





Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք դիմել՝ Երևան, Վարդանանց 14/1, հեռ.՝ **(374 10) 52-61-87, 65-36-65**:

Էլ. փոստ՝ armfha@netsys.am

Հարավային Կովկասում Երիտասարդության Վերարտադրողական Առողջության Նախաձեռնությանը մանրամասն ծանոթանալու համար դիմե՛ք մեր կայքին՝ www.4uth.am:

*Գեղանկարները ՝ Մարո Սարգսյանի*
*(տես www.members.tripod.com/maro_sargsyan)*